

Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ԲՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (2022 Թ.)

Երևան 2022

ՆԱԽԱԲԱՆ

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանը (այսուհետ՝ ԲՊՀ), արժևորելով իր ներքին և արտաքին շահակիցների կարիքների ու պահանջների շարունակական վերհանումը և ուսումնասիրությունը, պարբերաբար իրականացնում է հարցումներ: Վերջիններիս միջոցով բուհը վեր է հանում նրանց կարիքներն ու կարծիքները, հավաքագրում անհրաժեշտ տվյալներ, որոնք թույլ են տալիս իրականացնել արժանահավատ գնահատում բուհի և նրանց կարիքների համապատասխանության, ԲՊՀ կրթական և այլ ծառայություններից, ինչպես նաև ռեսուրսներից նրանց բավարարվածության աստիճանի վերաբերյալ: Հարցման արդյունքները վերլուծության են ենթարկվում և հաշվի են առնվում ԲՊՀ-ում նոր կրթական ծրագրերի մշակման, առկա ծրագրերի վերանայման և բուհի գործունեության այլ առանցքային ոլորտների բարելավմանը միտված գործընթացներում:

Ի թիվս ԲՊՀ-ի կողմից իր ուսանողների շրջանում պարբերաբար իրականացված այլ հարցումների, 2022 թ. հոկտեմբերին բուհն իրականացրել է ևս մեկ ուսանողական հարցում՝ աշխատաշուկայում նրանց զբաղվածության վերաբերյալ տվյալները հավաքագրելու նպատակով: Հարցման համար մշակված հարցաշարը բաղկացած է 5 բաժնից: Հարցումն իրականացվել է անանունության սկզբունքով, որը թույլ է տվել դուրս բերել օբյեկտիվ տվյալներ: Հարցման արդյունքներն ընդհանրական կերպով ներկայացվել և վերլուծվել են ըստ հետևյալ բաժինների (Աղյուսակ 1).

ԱՂՅՈՒՍԱԿ 1. 2022 Թ. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՇԱԿՎԱԾ ՀԱՐՑԱՇԱՐԻ ԲԱԺԻՆՆԵՐ

ԲԱԺԻՆ	ԲԱԺԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
Բաժին 1.	Հարցմանը մասնակցած ուսանողների թիվ
Բաժին 2.	Աշխատող և չաշխատող ուսանողների ցուցանիշներ
Բաժին 3.	Աշխատող ուսանողների աշխատանքային ոլորտներ
Բաժին 4.	Ուսանողներին աշխատանքի ընդունելու պատճառները/գործոնները
Բաժին 5.	Ուսանողների ձեռքբերած գիտելիքների ու հմտությունների բավարարվածություն

Հարցման արդյունքները նաև համադրվել են նույն տարում, սակայն այլ ժամանակահատվածում (2022 թ. հունիս) ուսանողների շրջանում իրականացված առավել լայնածավալ ինստիտուցիոնալ հարցման¹ հետ՝ հաշվի առնելով այն, որ այդ հարցումը ևս ընդգրկել է ուսանողների զբաղվածության վերաբերյալ հարցադրումներ: Նշվածը թույլ է տվել համադրելի արդյունքները դիտարկել՝ նրանց զբաղվածության ցուցանիշների դինամիկան առավել տեսանելի դարձնելու համար: Հարցման արդյունքների վերլուծական տվյալները ներկայացված են ստորև:

1. ՀԱՐՑՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ

Հարցումն իրականացվել է 2021 ուսանողների շրջանում, որին մասնակցել են և՛ բակալավրիատի, և՛ մագիստրատուրայի ուսանողները: Հարցմանը մասնակցած ուսանողներից 2167-ը բակալավրիատի ուսանողներ են, 44-ը՝ մագիստրատուրայի ուսանողներ (որոնցից՝ առկա՝ 2032, հեռակա՝ 179): Հարցմանը մասնակցած ուսանողների թվային և տոկոսային ցուցանիշները՝ ըստ ֆակուլտետների, ուսուցման առկա ու հեռակա ձևերի, ներկայացված են Աղյուսակ 2-ում և Գծապատկեր 1-ում:


ԱՂՅՈՒՍԱԿ 2. ՀԱՐՑՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ՝ ԸՍՏ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԵՐԻ

ՖԱԿՈՒԼՏԵՏ	ՀԱՐՑՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹԻՎ
Թարգմանության և միջմշակութային հաղորդակցության (ԹՄՀ) ֆակուլտետ	1150, որից՝
	1088 - առկա
	62 - հեռակա
Սոցիալական գիտությունների և սերվիսի (ՍԳՍ) ֆակուլտետ	365, որից՝
	285 - առկա
	80 - հեռակա
Ռուսաց և օտար լեզուների (ՌՕԼ) ֆակուլտետ	353, որից՝
	316 - առկա
	37 - հեռակա

¹ 2022 թ. հունիսին ԲՊՀ ուսանողների շրջանում անցկացված ինստիտուցիոնալ հարցման արդյունքների վերլուծությունը կներկայացվի առանձին փաստաթղթով:

Կրթության և մասնագիտական մանկավարժության (ԿՄՄ) ֆակուլտետ	343, որից՝
	343 - առկա
ԸՆԴՀԱՆՈՒՐ	2211, որից՝
	առկա՝ 2032
	հեռակա՝ 179

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1. ՀԱՐՑՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՏՈԿՈՍԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ՝ ԸՍՏ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՁԵՎԵՐԻ





Ուսանողների զբաղվածության ցուցանիշները կարելի է համադրել նույն տարում (հունիս) ԲՊՀ ուսանողների շրջանում իրականացված ինստիտուցիոնալ հարցման² համանման արդյունքների հետ: Նկատելի է, որ 2022 թ. հունիսին անցկացված հարցման մասնակցության ցուցանիշների համեմատ՝ այս հարցմանը մասնակցածների թիվը շուրջ 2 անգամ ավելացել է (հունիսի տվյալներ՝ 1107 մասնակից, հոկտեմբերի տվյալներ՝ 2211 ուսանող), որը կարող է ցուցանել բուհի որակի գնահատման գործընթացներում նրանց ներգրավվածության և ակտիվության բարձրացման մասին:

² 2022 թ. հունիսին ԲՊՀ-ի կողմից իրականացված ուսանողական հարցմանը մասնակցել է 1107 ուսանող (բակալավրիատ՝ 1061 և մագիստրատուրա՝ 63 ուսանող, որից՝ առկա՝ 1008, հեռակա՝ 116 ուսանող (բակալավրիատում և մագիստրատուրայում սովորող առկա ու հեռակա ուսանողների ընդհանուր թիվը (1124) գերազանցում է հարցման մասնակիցների ընդհանուր թվին (1107), որը պայմանավորված է տվյալ հարցին մեկից ավելի պատասխան նշելու հանգամանքով):

2. ԱՇԽԱՏՈՂ ԵՎ ՉԱՇԽԱՏՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Սույն հարցումն ընդգրկել է հարցադրում ուսանողների զբաղվածության վերաբերյալ, որից պարզ է դարձել, որ ուսանողների **26 %-ը (579 ուսանող) աշխատում է, 74 %-ը (1632 ուսանող)՝ ոչ**: Նշված ցուցանիշները գլխավորապես պայմանավորված են այն հանգամանքով, որ հոկտեմբերին իրականացված հարցման ժամանակահատվածում զգալի մասնակցություն են ունեցել 1-ին և 2-րդ կուրսի ուսանողները, որոնց թիվը կազմել է հարցման մասնակիցների գրեթե կեսը (մասնակիցների ընդհանուր թիվը՝ 2211, որից 1200-ը՝ 1-ին (596) և 2-րդ (604) կուրսեր)³: Չաշխատող ուսանողների տոկոսային ավելի բարձր ցուցանիշը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ուսումնառության վաղ փուլում, այսինքն՝ ուսումնական տարվա սկզբին, նրանց առավել նախապատվություն են տալիս կրթությանը և ընդհանուր առմամբ դեռևս չունեն լիարժեք բավարար գիտելիքներ ու հմտություններ (այդ թվում՝ որակավորում)՝ այդ փուլում աշխատաշուկայում զբաղվածություն ապահովելու համար: Աշխատող և չաշխատող ուսանողների տոկոսային ցուցանիշները ըստ 2022 թ. հունիս և հոկտեմբեր ամիսներին անցկացված հարցումների արդյունքների, ներկայացված են Գծապատկեր 2-ում:


ԳԾԱՊԱՏԿԵՐ 2. ԱՇԽԱՏՈՂ ԵՎ ՉԱՇԽԱՏՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՏՈԿՈՍԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ



³ 2022 թ. հոկտեմբերին անցկացված հարցմանը մասնակցած 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողների թիվը կազմել է 1200, ի տարբերություն հունիսին անցկացված հարցման տվյալների՝ 845:

Աշխատող և չաշխատող ուսանողների թվային ու տոկոսային ցուցանիշները (2022 թ. հոկտեմբեր) տարանջատելով **ըստ ուսուցման առկա և հեռակա ձևերի**՝ պարզ է դառնում, որ **առկա** ուսուցմամբ սովորող 2032 ուսանողների 24 %-ը (478 ուսանող) աշխատում է, իսկ 76 %-ը (1554 ուսանող)՝ ոչ: **Հեռակա** ուսուցմամբ սովորող ուսանողների դեպքում պատկերն այլ է. աշխատող ուսանողները կազմում են մեծամասնություն, այսինքն՝ հեռակա ուսուցմամբ սովորող 179 ուսանողների 56 %-ը (101 ուսանող) աշխատում է, 44 %-ը (78 ուսանող)՝ ոչ (Գծապատկեր 3).

ԳԾԱՊԱՏԿԵՐ 3. ԱՇԽԱՏՈՂ ԵՎ ՉԱՇԽԱՏՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՏՈԿՈՍԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ՝ ԸՍՏ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՁԵՎԵՐԻ




Այսպիսով, Գծապատկեր 3-ում ներկայացված տվյալների համադրումից ակնհայտ է դառնում, որ հեռակա ուսուցմամբ սովորող և միաժամանակ աշխատող ուսանողների թիվն ընդհանուր առմամբ գերակշռում է առկա ուսուցմամբ սովորող ու աշխատող ուսանողների թվին: Այս ցուցանիշները պայմանավորված են այն հանգամանքով, որ աշխատող ուսանողների համար ուսուցման առավել նպատակահարմար ձևը հեռական է, որի դեպքում ուսանողներն առավել ճկուն կերպով են կարողանում կրթությունը համատեղել աշխատանքի հետ:

3. ԱՇԽԱՏՈՂ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐ

2022 թ. հոկտեմբերին իրականացված հարցման արդյունքների համաձայն՝ **աշխատող** առկա և հեռակա ուսանողների կողմից ամենահաճախը նշվել են հետևյալ աշխատանքային ոլորտները՝

- **սպասարկման և հյուրանոցային ոլորտներ (190 ուսանող)**
- *կրթության ոլորտ (այդ թվում՝ մանկավարժություն) (160 ուսանող)*
- *SS ոլորտ (43 ուսանող)*
- *այլ ոլորտներ (134 ուսանող)*
- *բաց թողնված պատասխաններ (52 ուսանող)*⁴

ԳԾԱՊԱՏԿԵՐ 4. ԱՇԽԱՏՈՂ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐ



Աշխատող ուսանողների ցուցանիշներն ըստ ուսուցման առկա և հեռակա ձևերի տարանջատելիս ձևավորվում է հետևյալ պատկերը. **առկա** ուսուցմամբ սովորող ուսանողների մեծ մասի կողմից որպես աշխատանքային ոլորտ է նշվել **կրթության (այդ թվում՝ մանկավարժության) ոլորտը**, իսկ **հեռակա** ուսանողների դեպքում՝ **սպասարկման ոլորտը** (առկա ուսանողների դեպքում սպասարկման և հյուրանոցային ոլորտները նշվել են որպես երկրորդ բարձր ցուցանիշ): Մասնավորապես՝ առկա ուսուցմամբ

⁴ Բաց թողնված պատասխանների թիվը Գծապատկեր 4-ում նշված տոկոսային ցուցանիշներում ներառված չէ, քանի որ դրանք ուսանողների աշխատանքային ոլորտների վերաբերյալ որևէ հավաստի տեղեկություն չեն հաղորդում:


սովորող 478 ուսանողների 32 %-ը (155 ուսանող) նշել է կրթության ոլորտը, որն ընտրված մյուս ոլորտների շարքում կազմում է մեծամասնություն: Իսկ **հեռակա** ուսուցմամբ սովորող 101 ուսանողների մեծամասնության՝ շուրջ 38%-ի (38 ուսանող) կողմից ամենահաճախը սպասարկումն է նշվել որպես աշխատանքային ոլորտ (այլ ոլորտները եղել են բազմատեսակ, բայց դրանցից ոչ մեկը զգալի թիվ չի կազմել)՝

ԱՂՅՈՒՍԱԿ 3. ԱՇԽԱՏՈՂ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԹՎԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Առկա ուսանողների (478) կողմից ամենահաճախը նշված աշխատանքային ոլորտներ՝
<ul style="list-style-type: none"> • կրթության (<i>այդ թվում՝ մանկավարժության</i>) ոլորտ (155 ուսանող) • սպասարկում և հյուրանոցային ոլորտներ (149 ուսանող) • SS ոլորտ (42 ուսանող) • այլ ոլորտներ (132 ուսանող)
Հեռակա ուսանողների կողմից ամենահաճախը նշված աշխատանքային ոլորտ՝
<ul style="list-style-type: none"> • սպասարկման ոլորտ (38 ուսանող) • այլ ոլորտներ (63 ուսանող)

Աշխատանքային հիմնական ոլորտներին առնչվող տոկոսային ցուցանիշներն ըստ աշխատող առկա և հեռակա ուսանողների ներկայացված են Գծապատկեր 5-ում.

ԳԾԱՊԱՏԿԵՐ 5. ԱՇԽԱՏՈՂ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ՝ ԸՍՏ ՌԻՍՈՒՑՄԱՆ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՁԵՎԵՐԻ




Հեռակա ուսանողների մեծ մասի դեպքում սպասարկման ոլորտում աշխատանքային գործունեություն իրականացնելու փաստը կարող է պայմանավորված լինել ԲՊՀ-ում այդ մասնագիտություններով կրթություն ստացած շրջանավարտների համեմատաբար մեծ թվով:

Հատկանշական է այն, որ 2022 թ. հունիսին ԲՊՀ ուսանողների շրջանում անցկացված ինստիտուցիոնալ հարցման արդյունքների համաձայն՝ **աշխատող ուսանողների մեծ մասը (58%) աշխատում է իր մասնագիտությամբ կամ հարակից ոլորտներում** (Գծապատկեր 6)⁵

ԳԾԱՊԱՏԿԵՐ 6. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՏՈԿՈՍԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ (2022 թ. հունիս)⁵

⁵ Այս հարցման դեպքում հնարավոր չի եղել մասնագիտական և ոչ մասնագիտական ոլորտներում աշխատող ուսանողների զբաղվածության ցուցանիշները տարանջատել ըստ ուսուցման առկա և հեռակա ձևերի՝ հաշվի առնելով տվյալ հարցման համար կազմված հարցաշարի ձևաչափը:



Այսպիսով, ուսանողների մասնագիտական զբաղվածությանն առնչվող ցուցանիշները դրական են, քանի որ իրենց մասնագիտությամբ աշխատող և՛ առկա, և՛ հեռակա ուսանողների թվային ցուցանիշները կազմում են մեծամասնություն:


4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ/ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Ըստ 2022 թ. հոկտեմբերին անցկացված հարցման մասնակիցների՝ ԲՊՀ ուսանողներին աշխատանքի ընդունելիս գործատուների կողմից հիմնականում հաշվի են առնվել հետևյալ գործոնները կամ պատճառները⁶

- **ուսանողների օտար լեզվի իմացությունը (451 ուսանող)**
- ուսանողների գործնական հմտությունները (377 ուսանող)
- ուսանողների մասնագիտական գիտելիքները (260 ուսանող)
- ուսանողների աշխատանքային փորձառությունը (161 ուսանող)
- ուսանողների ՏՀՏ-ների կիրառման հմտությունները (126 ուսանող)
- ԲՊՀ ուսանող լինելու փաստը (111 ուսանող)
- այլ կոմպետենցիաներ (27 ուսանող)
- բաց թողնված պատասխաններ (767 ուսանող)⁷

⁶ Հաշվի առնելով այն, որ սույն հարցին պատասխանելու համար հնարավոր է եղել ընտրել մեկից ավելի տարբերակ, այս հարցի պատասխանների ընդհանուր թիվը գերազանցում է հարցմանը մասնակցածների ընդհանուր թվին:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 7. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ/ԳՈՐԾՈՆՆԵՐԸ




Ուսանողներին աշխատանքի ընդունելու հիմնական պատճառներն ըստ ուսուցման առկա և հեռակա ձևերի տարանջատելիս ստացվում է հետևյալ պատկերը. **առկա** ուսուցմամբ սովորող 478 ուսանողներին աշխատանքի ընդունելիս հաշվի են առել հետևյալ գործոնները կամ պատճառները⁸

- **ուսանողների օտար լեզվի իմացություն (398 ուսանող)**
- ուսանողների գործնական հմտություններ (308 ուսանող)
- ուսանողների մասնագիտական գիտելիքներ (217 ուսանող)
- ուսանողների աշխատանքային փորձառություն (130 ուսանող)
- ուսանողների ՏՀՏ-ների կիրառման հմտություններ (114 ուսանող)
- ԲՊՀ ուսանող լինելու փաստ (101 ուսանող)
- Այլ կոմպետենցիաներ (18 ուսանող)

⁷ Բաց թողնված պատասխանների թիվը Գծապատկեր 7-ում նշված տոկոսային ցուցանիշներում ներառված չէ, քանի որ դրանք աշխատանքի ընդունելու պատճառների կամ գործոնների վերաբերյալ որևէ հավաստի տեղեկություն չեն հաղորդում:

⁸ Այս հարցը մի քանի տարբերակ ընտրելու հնարավորություն է ունեցել, որն էլ պայմանավորել է նշված հիմնական պատճառները նշածների ընդհանուր թվի գերազանցությունը այս հարցին պատասխանած ուսանողների թվի նկատմամբ:


ԳԾԱՊԱՏԿԵՐ 8. ԱՌԿԱ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ/ԳՈՐԾՈՆՆԵՐԸ



Հեռակա ուսուցմամբ սովորող 101 ուսանողներին աշխատանքի ընդունելիս հաշվի են առել հետևյալ գործոնները կամ պատճառները՝

- **ուսանողների գործնական հմտություններ (69 ուսանող)**
- ուսանողների օտար լեզվի իմացություն (53 ուսանող)
- ուսանողների մասնագիտական գիտելիքներ (43 ուսանող)
- ուսանողների աշխատանքային փորձառություն (31 ուսանող)
- ուսանողների ՏՀՏ-ների կիրառման հմտություններ (12 ուսանող)
- ԲՊՀ ուսանող լինելու փաստ (10 ուսանող)
- այլ կոմպետենցիաներ (9 ուսանող)

ԳԾԱՊԱՏԿԵՐ 9. ՀԵՌԱԿԱ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ/ԳՈՐԾՈՆՆԵՐԸ




Համեմատելով աշխատող առկա և հեռակա ուսանողների պատասխանները՝ կարելի է արձանագրել այն, որ ըստ առկա ուսուցմամբ ուսանողների՝ իրենց աշխատանքի ընդունելու հիմնական գործոնը եղել է **օտար լեզվի իմացությունը**, իսկ հեռակա ուսանողների կարծիքով՝ **գործնական հմտությունները**:

5. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐԱԾ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Ըստ 2022 թ. հոկտեմբերին անցկացված հարցման արդյունքների՝ ուսանողների կողմից ԲՊՀ-ում ձեռքբերված գիտելիքներն ու հմտությունները գնահատվել են հետևյալ ձևով՝

- **հիմնականում բավարար են (1144 ուսանող)**
- լիովին բավարար են (397 ուսանող)
- այնքան էլ բավարար չեն (312 ուսանող)
- բավարար չեն (136 ուսանող)
- դժվարանում են պատասխանել կամ բաց թողնված պատասխաններ (222 ուսանող)

ԳԾԱՊԱՏԿԵՐ 10. ԲՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐԱԾ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ



Գծապատկեր 10-ը ցույց է տալիս, որ 1-ին ամենաբարձր ցուցանիշը (52 %-ը) վերաբերում է «**հիմնականում բավարար են**» գնահատականին, իսկ 2-րդ ամենաբարձր ցուցանիշը (18 %-ը) «**լիովին բավարար են**» տարբերակին: ԲՊՀ-ում ձեռքբերված գիտելիքներից ու հմտություններից բավարարվածության դրական գնահատականները («**հիմնականում բավարար են**» և «**լիովին բավարար են**») միավորելու պարագայում ակնհայտ է դառնում, որ հարցմանը մասնակցած ուսանողների 70%-ն ընդհանուր առմամբ բավարարված է բուհում ձեռքբերված գիտելիքներից ու հմտություններից:

Վերոնշյալ հարցին տրված պատասխաններն ըստ առկա և հեռակա ուսանողների տարանջատելու պարագայում ստացվում է նույն պատկերը, այսինքն՝ ամենաբարձր ցուցանիշը կազմում է «**հիմնականում բավարար են**» գնահատականը.

ԱՂՅՈՒՍԱԿ 4. ԲՊՀ-ՈՒՄ ՁԵՌՔԲԵՐՎԱԾ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻՑ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԹՎԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ՝ ԸՍՏ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՁԵՎԵՐԻ


Առկա ուսանողների (2032) բավարարվածություն՝
<ul style="list-style-type: none"> • հիմնականում բավարար են (1051 ուսանող) • լիովին բավարար են (351 ուսանող) • այնքան էլ բավարար չեն (294 ուսանող)

- դժվարանում են պատասխանել կամ բաց թողնված պատասխաններ (204 ուսանող)
- բավարար չեն (132 ուսանող)


Հեռակա ուսանողների (179) բավարարվածություն՝

- **հիմնականում բավարար են (93 ուսանող)**
- լիովին բավարար են (46 ուսանող)
- այնքան էլ բավարար չեն (18 ուսանող)
- դժվարանում են պատասխանել կամ բաց թողնված պատասխաններ (18 ուսանող)
- բավարար չեն (4 ուսանող)

ԳԾԱՊԱՏԿԵՐ 11. ԱՌԿԱ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐԱԾ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ



ԳԾԱՊԱՏԿԵՐ 12. ՀԵՌԱԿԱ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԶԵՌՔԵՐԱԾ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ



Այսպիսով, ԲՊՀ-ում ուսանողների ձեռքբերած գիտելիքներից ու հմտություններից բավարարվածության աստիճանն ընդհանուր առմամբ գնահատվում է **հիմնականում բավարար**, որը դրական ցուցանիշ է և միաժամանակ պարտավորեցնում է ԲՊՀ-ին շարունակել բարելավմանը միտված միջոցառումները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ԲՊՀ ուսանողների աշխատանքային զբաղվածության վերաբերյալ տվյալների ուսումնասիրումը, ներառյալ 2022 թ. հունիս և հոկտեմբեր ամիսներին անցկացված ուսանողական հարցումների արդյունքների համադրական վերլուծությունը ցույց են տալիս, որ **համեմատաբար բարձր ցուցանիշներ** են կազմում՝

- ✓ **աշխատող հեռակա ուսանողների թիվը**, ինչը պայմանավորված է նրանով, որ հեռակա ուսուցման ձևը, ըստ ուսանողների, առավել նպատակահարմար է կրթության և աշխատանքի համատեղման տեսանկյունից,
- ✓ **իրենց մասնագիտությամբ աշխատող ուսանողների թիվը**, ինչը որակական ցուցանիշների տեսանկյունից փաստում է, որ բուհը կարողանում է բավարարել աշխատաշուկայի ներկայիս պահանջները՝ տրամադրելով արդի մասնագիտական գիտելիքներ և իրականացնելով աշխատաշուկայի կարիքներին համահունչ կրթական ծրագրեր,
- ✓ **«հիմնականում բավարար են»** և **«լիովին բավարար են» (որպես 2 ամենաբարձր ցուցանիշներ)** գնահատականները, որոնք վերաբերում են ԲՊՀ-ում ձեռքբերված գիտելիքներից ու հմտություններից ուսանողների բավարարվածության աստիճանին,
- ✓ **կրթության (այդ թվում՝ մանկավարժության), սպասարկման և հյուրանոցային ոլորտները**, որոնք՝ որպես մասնագիտական ոլորտներ, ամենահաճախ են նշվել աշխատող ուսանողների կողմից,
- ✓ **ավելի բարձր կուրսերում սովորող և միաժամանակ աշխատող ուսանողների թիվը՝** հաշվի առնելով այն, որ ուսումնական տարվա սկզբնական ժամանակահատվածում նրանք կրթությունը գերադասում են աշխատանքից, և ընդհանուր առմամբ դեռևս չունեն լիարժեք բավարար գիտելիքներ ու հմտություններ (այդ թվում՝ որակավորում)՝ իրենց ուսումնառության վաղ փուլում զբաղվածությունն ապահովելու համար,
- ✓ **օտար լեզվի իմացություն, գործնական և մասնագիտական գիտելիքներ ունենալու գործոնները՝** որպես ԲՊՀ ուսանողներին աշխատանքի ընդունելու հիմնական պատճառները: